«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 16/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 05.03.2018թ. ժամը 17:06

Համաձայն 14.02.2018թ. թիվ Ե-11/18 գրությամբ՝ «Ֆ.Ի.Կ.Օ»ԼՎԿ ՍՊ ընկերությունից,«ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝16.02.2018թ-ին ստացված դիմումը քաղաքացի Լևոն Հովհաննիսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Հարությունյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ,կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար՝ ս/թ-ի Մարտի 05-ին ժամը 17.00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Դիմումատու՝«Ֆ.Ի.Կ.Օ»ԼՎԿ ՍՊ ընկերությունը

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Հարություն Գևորգյանը
Հանձանաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Հանձանաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Լևոն Հովհաննիսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Հարությունյանը
Դիմումատու՝ ՝«Ֆ.Ի.Կ.Օ»ԼՎԿ ՍՊ ընկերության ներկայացուցիչ՝Ինգա Ավագյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ
«Ֆ.Ի.Կ.Օ»ԼՎԿ ՍՊ ընկերությունից 14.02.2018թ. թիվ Ե-11/18 գրությամբ, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 16.02.2018թ-ին ստացված դիմումը քաղաքացի Լևոն Հովհաննիսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Հարությունյանի գործողությունների/անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման,դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ՝
Մինչև օրակարգի հարցի քննարկման անցնելը հանձնաժողովի նախագահ Տ.Հարությունյանը առաջարկության համար ձայն վերցրեց և ներկայացնելով այն փաստը,որ օրակարգում ընդգրկված է իր,որպես սնանկության գործով կառավարիչի՝ վարքագծերի վերաբերյալ հարցի քննարկում, ինքը որպես հանձնաժողովի անդամ և նախագահող ինքնաբացարկ է հայտարարում և առաջարկեց այս նիստը վարելու համար ընտրել նիստը վարող-նախագահող ու քվեարկությունը կազմարպել առանց իր ձայնի:

Նիստի մասնակից հանձնաժողովի անդամները քննարկեցին ինքնաբացարկը,ընդունեցին այն ճիշտ և նիստի վարման կանոնակարգին համապատասխան ու առաջարկելով,որպես հանձնաժողովի այս նիստին նախագահող՝Արմենակ Ադամյանի թեկնածությունը,հարցը դրեցին քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ – Քաղաքացի Լևոն Հովհաննիսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Հարությունյանի գործողությունների/անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման,դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը և 16.02.2018թ-ին «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝«Ֆ.Ի.Կ.Օ»ԼՎԿ ՍՊ ընկերությունից ստացված 14.02.2018թ. թիվ Ե-11/18 դիմումներում նշված փաստական հանգամանքների քննարկման համար, ս/թ-ի Մարտի 05-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստով ընդունել հանձնաժողովի անդամ-նախագահ Տիգրան Հարությունյանի ինքնաբացարկը և սույն նիստում նախագահող ընտրել հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանին:

ԼՍԵՑԻՆ՝
Կարգապահական Հանձնաժողովի նախագահող՝ Արմենակ Ադամյանը նիստը հայտարարեց բացված,ներկայացրեց «Ֆ.Ի.Կ.Օ»ԼՎԿ ՍՊ ընկերությունից 14.02.2018թ. թիվ Ե-11/18 գրությամբ, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 16.02.2018թ-ին ստացված դիմումը՝ քաղաքացի Լևոն Հովհաննիսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Հարությունյանի վերաբերյալ, հանձնաժողովին ներկայացրած փաստաթղթերը և առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել քաղաքացի Լևոն Հովհաննիսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Հարությունյանի նկատմամբ «ԿՀ գործու նեության և ՍԳԿ-ի կարգապահական վարույթի իրականացման» Կարգի 1.4 կետի հիմքով, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:
Հանձնաժողովում նախագահողը հարցը դրեց քվերակության

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝
Կողմ - 4
Դեմ – 0
Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝
«Ֆ.Ի.Կ.Օ»ԼՎԿ ՍՊ ընկերությունից 14.02.2018թ. թիվ Ե-11/18 գրությամբ, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 16.02.2018թ-ին ստացված դիմումի հիմքով՝ քաղաքացի Լևոն Հովհաննիսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Հարությունյանի գործողությունների /անգործության/, դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, հարուցել կարգապահական վարույթ:

ԼՍԵՑԻՆ՝
Հանձնաժողովի նախագահող՝Արմենակ Ադամյանը ներկայացրեց ստացված դիմումը և ներկայացված փաստաթղթերը և առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել դիմումում մեջ նշված հանգամանքները, քաղաքացի Լևոն Հովհաննիսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Հարությունյանի գործողությունների /անգործության/ փաստական հանգամանքները և սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հայտնել կարծիք:
Հանձնաժողովի անդամ՝Հ.Մարտիկյանը, առաջարկեց լսել ներկա գտնվող քաղաքացի Լևոն Հովհաննիսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Հարությունյանի բացատրությունները և ուսումնասիրել նրա ներկայացրած փաստարկները:
Նիստի նախագահող՝Ա.Ադամյանը ձայնը տվեց,քաղաքացի Լևոն Հովհաննիսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Հարությունյանի Սամվել Հարությունյանին,ով մասնավորապես նշեց,որ քաղաքացի Լևոն Հովհաննիսյանը Երևան քաղաքի Շենգավիթի վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 11.08.2016թ-ի ԵՇԴ/0121/04/16 վճռով ճանաչվել է սնանկ նույն դատարանի 15.08.2016թ-ի որոշմամբ սնանկության գործով կառավարիչ է նշանակվել՝Տիգրան Հարությունյանը,որից անմիջապես հետո սնանկության գործով կառավարիչը ձեռնամուխ է եղել իր պարտականությունների և լիազորությունների կատարմանը,

որի հետևանքով ԴԱՀԿԾ-ի միջոցով հայտնաբերվել,առգրավվել և գույքագրվել է պարտապանին սեփականության իրավունքով պատկանող FORD MONDEO 2.0I ավտոմեքենան /գույքը/,որը գույքագրումից հետո ԴԱՀԿԾ-ից ստացվել և վերցվել է պատասխանատու պահպանության կառավարչի կողմից:Վարույթի ընթացքում պարզվել է որ ավտոմեքենան հանդիսանում է գրավի առարկա և ապահովվում է պարտապանի պարտավորությունների կատարումը «Ֆ.Ի.Կ.Օ» ՎԿ ՍՊ ընկերության նկատմամբ:

Պարտատերը իր իրավունքների վերաբերյալ պահանջ է ներկայացրել դատարան,որպիսի պահանջը օրենքով սահմանված կարգով գրանցվել է պարտատերերի ցուցակում,որպես ապահովված գրավով ապահովված պահանջատեր:Գույքագրված գույքը կառավարչի կողմից գնահատվել է,որի հիմքով էլ 17.10.207թ-ին «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ կետի հիմքով առաջարկվել է պարտատիրոջը պարտքի դիմաց որպես սեփականություն ստանալու հնարավորությունը:

Պարտատերը 19.10.2017թ-ին գրավոր դիմել է կառավարչին խնդրել ստանալ գրավի առարկան իր պահանջի դիմաց:Կառավարչի կողմից 30.10.2017թ-ին,միջնորդություն է ներկայացվել դատարանին գույքը պարտատիրոջը իր պարտքի դիմաց,որպես սեփականություն հանձնելու վերաբերյալ: Դատարանը քննել է միջնորդությունը և 02.11.2017թ-ին բավարարել է միջնորդությունը,կայացնելով գույքը պարտքի դիմաց պարտատիրոջը որպես սեփականություն հանձնելու վերաբերյալ որոշում:

Ի կատարումն որոշման 09.11.2017թ-ին կառավարչի կողմից,ավտոմեքենան հանձնվել է պարտատիրոջ ներկայացուցչին,որի վերաբերյալ կազմված Հանձնման-Ընդունման ակտում պարտատերը ընդունելով ավտոմեքենան,որպես թերություն նշել է որ բացակայում և վնասված են մեքենայի մի քանի մասեր և պատկանելիքներ,այդ թվում Գազի բալոնը և գազի ռեդուկտորը:

Կառավարչի կողմից բացատրվել է որ Գազի բալոնը և գազի ռեդուկտորը դրանք գրավ վերցնելու ժամանակ տեղադրված չեն եղել,այլ տեղադրվել են պարտապանի կողմից հետագայում իր ծախսերով և հանդիսանում են գրավի առարկայի բաժանելի բարելավումներ,որը ապամոնտաժվել է նույն պարտապանի կողմից և այժմ գտնվում են պարտապանի պատասխանատու պահպնության տակ,մինչև կառավարչի հետագա հանձնարարականները:

Դրանից հետո պարտերը սկսել է պահաջել և մինչ օրս էլ պահանջում է Գազի բալոնը և գազի ռեդուկտորը,ըստ էության քննարկվող դիմումը նույնպես նպատակա է հետապնդում պարտատիրոջ կողմից բաժանելի բարելավում հանդիսացող Գազի բալոնը և գազի ռեդուկտորը ստանալը որը իր կարծիքով կարող է հանդիսանալ չապահովված պարտատերեի պահանջների բավարարման միջոց:

Հանձնաժողովի անդամ՝Մ.Մարտիկյանը հարց ուղղեց պարտատիրոջ ներկայացուցչին թե արդյոք կառավարչի ներկայացրած նպատակն է հետապնդում իրենց դիմումը:Պարտատիրոջ ներկայացուցիչ՝Ի.Ավագյանը պատասխանեց,որ այո այդ նպատակն է հետապնդում իրենց դիմումը որը ունի նաև հիմքեր Գազի բալոնը և գազի ռեդուկտորը պահանջելու,որը հանդիսանում է 02.04.2016թ-ի ԴԱՀԿԾ-ի արձանագրությոյամբ նշված ապրանքատեսականին,որին համապատասխան կառավարիչը ստացել է այդ ապրանքը մեքենայի հետ միասին,որը իրենց հիմք է տալիս,որ դա պետք է փոխանցվի գրավի առարկայի հետ միասին,որպես մեքենայի պատկանելիք,այլ ոչ թե դիտվի որպես բաժանելի բարելավում:

Հանձնաժողովի նախագահող՝Ա.Ադամյանը հարց ուղղեց կառավարչին թե արդյոք Գազի բալոնը և գազի ռեդուկտորը առկա են և հնարավոր է դրանք հանձնել պարտատիրոջը կարճ ժամանակում:Կառավարիչը պատասխանեց որ այո գույքը առկա է և հնարավոր է հանձնել:

Բացի դրանից կառավարիչը նշեց որ իր կողմից իրականացված գործողությունները հիմնավորված են բացառապես օրենքով և հետապնդում են պահանջատերերի պահանջների բավարարման շահերը և պահանջվող կատարվելիք գործողությունների պարտատիրոջ պահանջով կատարելու դեպքում չապահովված պարտատերեը գումարներ չեն ստանա:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին հարցը ,մասնավորապես հանձնաժողովի նիստի նախագահող Արմենակ Ադամյանը հայտնեց այն կարծիքը, որ ներկայացված դիմումում նշված փաստերի և կառավարչի կողմից ներկայացված բացատրությունների և կից փաստաթղթերի համադրումից պարզ է, որ դիմումատուն տեղյակ է սնանկության վարույթից,կառավարչի իրավունքներից և պարտականություններից ու իր կարծիքով խնդիրը իրավական հարթության

վրա է,որը օրենքով սահմանված չէ,այսինքն տվյալ Գազի բալոնը և գազի ռեդուկտորը սնանկության վարույթում պետք է դիտվի գրավի առարկայի պատկանելիք թե գրավի առարկայի վրա կատարված բարելավում,որի առանձնացումից հետո գրավի առարկայի օգտագործման նշանակությունը չի փոխվում:

Կողմերի կարծիքների վերլուծությունից պարզ է դառնում,որ կառավարիչը դուրս է գալիս գույքի օգտագործման նշանակության չփոխվելուց,բարելավումը գրավադրելուց հետո կատարելու և դրա բաժանելի լինելու և այլ չապահոված պարտատերերի առակայության և նրանց պահանջների բավարարման հնարավորությունների հանգամանքից,իսկ պարտատերը ելնում է գրավի առարկայի իրացվելիության և նրա արժեքի ավելացման ու իր պարտքի վերականգնման հնարավորությունների ավելացման հանգամանքներից և փորձում է կառավարչի գործողություններից բողոքելով ուղղորդել կառավարչին իրենց օգտին գործողություններ կատարելուն:

Հանձնաժողովի նախագահողը՝Ա.Ադամյանը ավելացրեց,որ սնանկության վարույթում «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասը կարգավորում է գույքագրված գույքի պահպանման կարգը և դա դրված է սնանկության գործով կառավարչի վրա իմպերատիվ ձևով:Այսինքն կառավարիչն ինքն է որոշում պահպանման ձևը և կարգը և կրում դրա հետ կապված հետագա վնասների,կորստի կամ այլ պատասխանատվությունը այդ իրավիճակում կառավարչի գործողությունները պետք է ուղղված լինեն գույքի անբողջականության, իրացվելիության և այլ թերություններից պահպանմանը,որը հետագայում իրացնելուց հետո,ստացված միջոցները պարտատերերի պահանջների բավարարմանը ուղելու համար:Այս պարագայում կառավարիչ՝Տ.Հարությունյանի գործողությունները հիմնավորված են այդ հոդվածի հիմքով, այսինքն իրավաչափ են և կատարվել են օրենքով սահմանված իր լիազորությունների իրականացման շրջանակներում:

Ինչ վերաբերվում է կառավարչի գործողություններին կամ անգործության մեղադրանքներին ապա դրանք չեն կարող համապատասխանել իրականությանը, քանի որ կառավարչի կողմից կազմակերպված է գույքի պահպանությունը և դրա կարգի,ձևի կամ այլ հարցերի վերաբերյալ, շահագրգիռ կողմերից ոչ մի բողոք կամ գրություն չի ստացվել և չկա:

Այսինք ՍԳ կառավարիչ՝Տ.Հարությունյանի գործողությունները կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի կարգով և բխել են նույն օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջների կատարման ապահովման անհրաժեշտությունից և հիմնավորված են 29-րդ հոդվածի 1-ին մասի /ե/ կետով իրեն վերապահված լիազորություններով,իսկ փաստական հանգամանքները ուսումնասիրությունից հետո պարզ է,որ հարուցված կարգապահական վարույթ անհրաժեշտ է կարճել, ՍԳ կառավարիչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի նախագահող՝Ա.Ադամյան առաջարկը դրեց քվեարկության՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՝

1. «Ֆ.Ի.Կ.Օ»ԼՎԿ ՍՊ ընկերությունից 14.02.2018թ. թիվ Ե-11/18 գրությամբ, «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 16.02.2018թ-ին ստացված դիմումի հիմքով , քաղաքացի Լևոն Հովհաննիսյանի սնանկության գործով կառավարիչ՝ Տիգրան Հարությունյանի գործողությունների /անգործության/, սնանկության գործով կառավարչի վարքագծի և նրա գործողությունների օրենքին և կանոնակարգերին համապատասխանության նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը կարող է կարճվել, քանի որ կառավարչի գործողությունները չեն պարունակում օրենքի կամ վարքագծի կանոնների խախտումներ և կատարվել են «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի կարգով և բխել են նույն օրենքի 55-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջների կատարման ապահովման անհրաժեշտությունից և հիմնավորված են 29-րդ հոդվածի 1-ին մասի /ե/ կետով իրեն վերապահված լիազորություններով ու կարգապահական վարույթի ընթացքում նրա մեղքը ապացուցող փաստերի /ապացույցների/ բացակայության պատճառաբանությամբ:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Մ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Գևորգյան